

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	համար
սարեկան	12 ֆր.
վեցանկան	7 "
Արսասահմանի	
համար սարեկան	15 "
վեցանկան	8 "
Ավերիկայի համար	
սարեկան	3 ռ.
վեցանկան	1.50 "

Մանուգլան սպր ա-
ստացին երեսին համար
40 սանթիլ իսկ վերջին
երեսին համար 20 սան-
թիլ է. երեքին անկի
սեփախանք համար
20 0/0 գեղջ կըլայ:

Վառնայի համար ձեռ
ֆհ 10 սարիլ է

ՇԱՐՅՈՒՆ

ՆՍԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՇԱՐՅՈՒՆ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Պատկերի և գրան
դրիչի խմբագրության
հասցեին

Редакция на вѣстникъ
"Шаржунъ"
Варна

Redaction du journal
"Charjoum"
Varna (Bulgarie);

Պուշկարիոյ համար
ձեռք

15 ՍԱՆԹԻՄ
Արսասահմանի համար
ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ևս չեն
սրուիր

ՇԱՐՅՈՒՆԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԹԵ ԻՆՉԻ ԴՐԱՍՆԵՐԸ ՉԸ ՅԱՆՁՆԵՑԻ

() ()

Բ.

Յօդուածիս առաջին մասում պարզեցի որ Բ. Կ. կոմիտէի կասալում գտնված գրամը չէր յանձնեցի Կ. կոմիտէին, որովհետեւ նա ստեղծված էր Միմեծ օրինակից և տրամադրված այդ գրամները ծախսել գործիչ պահելու համար, իմ այդ քայլը ուրեմն մի բողոք էր խայտառակ օրէն ստեղծված մի որոշումի, որը խորտակում էր Դաշնակցական ընդհանուր ժողովի ստեղծած հիմնական և խելացի մի օրէնքը: Պարզեցի և այն որ ևս պատրաստ եմ եղել այդ գրամը յանձնել երկրի մաստիսանատու մարմին, որին և իրապէս պատկանում էր: Այս պարագայում պարզ է որ ես հանդիսանում եմ մեղադրող վնասակար օրինակներին, որոնք վտանգաւոր նախադէպեր են օտեչ-ծում ստոբ նպատակներով զեկավարվող մարդկանց համար օգտը վել միամիտ ձայներից և փայտեայ մատներին, ու խորտակել ամենաէական մի օրէնք իսկ, որը կազմում է կազմակերպութեան իրական հաստատութեան և յառաջագիւծութեան սիւներից մին:

Հիմա գանք Ռուսաստանից եկած գումարի մասին խօսելու, որի համար իմ առաջին յայտարարութեան մէջ յայտնել էի թէ այդ գումարը ակամայ մնաց ինձ մօտ և նրա առաքման ձեւը անպատւաբեր է ու ե յեզափոխական կազմակերպութեան համար:

Իրօք այս գրամի պատմութիւնը բացարձակ զաւեշտական գոյն ունի և թարմ ապացոյց է այն քառսի, վախկոտութեան և անշնորհութեան որը տիրում է Դաշնակցութեան Բիւրօներին մէջ և որի մասին ար-

գէն մի քանի անգամ շեշտել եմ Ոկսենք պատմութիւնը:

Երբ այլեւս ներքին մաքառումները յուսահատ, որոշում էի իմ «Բաց նամակներս» ուղղել դաշնակցական ընկերներին, համոզված էի թէ ինձ գէտ պէտք է սկսել կատաղի ներքին և արտաքին պայքարը Դաշնակցութեան կացութեան տէրերի և նըրանց ամեն կարգի մանկաւարիկներին կողմից, որի հիմքը արգէն գրված էին տարիներ առաջ, «Շարժում» քննադատական յօդուածները սկսած օրից: Իսկ այս քարն սկսել եմ կողմից և կանգ առնել շէր կարելի պէտք էր շարունակել: Իսկ դրա համար պէտք էին ինձ ներթափան միջոցներ: առանց որոշ ներթափան միջոցի, մի կազմակերպութեան յայտնի գիւմարողի գեր կատարելը անհնարին բան է: Այդ իրական նութիւնը աչքի առաջ ունենալով՝ ես նամակ գրեցի Ռուսաստան իմ ընկեր բարեկամներից մէկին յայտնելով իմ բռնիք գիրքի և այդ գիրքը հաստատուն պահելու համար գրամի անհրաժեշտութեան մասին և գրամ խնդրեցի: նամակ կրկնակի պատւիրեալ էր: Դեկտեմբերի 12 ին ընդունեցի այդ նամակը ստացվելու պաշտօնական թուղթով մի տիկնոջ թէ օրիորդի ստորագրութեամբ բարեկամիս տուած հաւատարմութիւն հիման վրա Բարեկամիս լրջութեան վրա անպայման վստահութիւն ունեմ: այդպիսի պարագայում եթէ բացասելիս լինէր, իսկոյն կը հազորդէր: և ինձ սին յոյսերի և սպասումների մէջ շէր թողնի:

Ահա այդ սպասումների մէջ ապրիլ 20 ին կանացի ծրարով մի փոքրիկ նամակ եմ ստանում յայտարարած գումարի շէքով: և նամակը հետեւեալն է.

12 ապրիլ 1905

Մեծարգոյ պարոն,
Ուղարկում եմ այն 2000 ռուբլի պարտքը որ վաղուց վերցրել էի ձեզանից: խնդրեմ ներողամիտ լինէք, որ այսքան ժամանակ միջոց չունե-

ցայ վճարելու: շատ ծանր հանգամանքների ժամանակ գուք օգնութեան հասաք ինձ և: ընտանիքիս անմոռանալի կը լինի այդ բոլորիս համար, հիմա պ. Ռաշիան էլ ազատվեց բանտից և կարողանում է փոքր ինչ օգնել ընտանիքիս:

Երբ գրեցի... (ինձ անծանօթ մի ստորագրութիւն)
Կանացի ծրարը, ինչ որ Ռաշիան բանտից ազատվելը, ինձ վստահեցնում է որ գրամը շրջանում պատւիրեալ նամակիս ստացականը ստորագրողը տիկինը պէտք է լինի, իսկ բանտից ազատվողն էլ բարեկամս, որի ձեռքով կազմված լինելու պատճառով յիշեալ տիկինը թէ օրիորդն է փոստից ընդունել նամակս: Չը նայելով այդ ամենին ես կազմակերպութեան մէջ ընդունված միջոցները գործ եմ դնում գաղտնիք հասկանալու, եթէ կայ: Ինչպիսի պարզ և առանց ու եէ ակնարկի՝ կամ գաղտնի բացատրութեան նոյն իսկ պաշտօնական գիրքում գտնված միջոցին թէ գրամը ուրիշին պէտք է յանձնել նամակ ընդունած շեմ ու համոզված եմ որ գրամ իմս է: Փոքրիկ տատանումները գալիս է ընչելու նոյն ծրարով և նոյն գրով: բայց տարբեր կեղծ ստորագրութեամբ նամակ գրված նոյն թուականին: Ահա այդ նամակը:

12 ապրիլ 1905

Յարգելի պ. Իսահակ,
Վաղուց է մենք խնդրել էինք ուղարկել սեզ թերթը, բայց չենք ըստանում: գրամ էլ ենք ուղարկել: Խնդրում ենք այդ մասին կարգադրէք: այստեղ զանազան խնդրագրեր են կազմում ժողովրդի կողմից և ուղարկվում նախարարներին: կարծում ենք գրանով առանձին բան կը շնորհի: Շատ խառնափոթ գրութիւն է ստեղծվել:

Այս նամակը այլեւս անպայման համոզում է ինձ որ գրամը շրջանում չէր ուղում են հասկացնել թէ գրամը թերթին է վերաբերում, առաջին նամակը աւելի պարզաբանած լինելու համար: Շատ գոհ եմ նոյն իսկ մի քանի բարեկամների յայտնում եմ իմ այդ բար-

տաւորութեան մասին, և բնականօրէն սկսում վարվել իմ սեփական գրամի պէս:

Սրա հետ չը մօտանաք և այն պայմանները որում ես գտնվում էի ապրիլին Դաշնակցութեան հանգեպ: Յունվարից արդէն ես չը կամ Կ. կոմիտէի մէջ: Իրամ ստացվելու հասցէն փոխված է ուրիշ քաղաք, և բացի այդ Կ. կոմիտէն նոյն իսկ քայլեր է արել ինձ Դաշնակցութիւնից վընտրված հռչակել տալ իմ զինքը արհամարելու: գրամը չը տալու և իրենց ընկերութիւնը մեքծելու պատճառով: Այդ սեփական գրութեանս մէջ, բոլորովին յայտնիօրէն խղված, անկարելի է սպասել այդչափ անկանոնութիւն յարաբերութիւնների և վախկոտութիւն արեւելեան Բիւրօի կողմից որ ինձ ու է գրամ ուղարկեն:

Առաջին նամակը ստանալուց յետոյ նոյն տեղից, երկու շաբաթ անցած, ստանում եմ մի հեռագիր տարբեր անունով և հետեւեալ անորոշ բովանդակութեամբ:

Մեր գրամական պահանջը յանձնեցէք:

Այստեղ կասկածը սիրտս է ընունում, բայց մտածում եմ որ անշուշտ եթէ զրկված գումարի մասին է, շուտով որի որ յանձնելու է նրանից պահանջ կըստացվի: Յունիս 15 ին Ռուսաստանից եկած հեռագրի յիշած մարդից ստանում եմ հետեւեալ հեռագիրը:

Դուք պարտաւոր էք անմիջապէս փոխադրել ինձ... ից եւ այսինչ մարդից եկած 400 ֆրանքը:

Այս հեռագրում յիշված մարդը առաջին հեռագրի վարկողն է:

Էհ, կասկածի ծանր քար ընկնում է սրտիցս: ուրեմն առաջին հեռագիրը չէ վերաբերում նամակների դումարին: Բնական է որ ես աւելի եւս թզատ եմ իմ գրամս ծախսելու մէջ: Եւ ես անմիջապէս պատասխանում եմ ուղղմանտէ քարթով—ինձ համար մի զըղելի մարդի, որ

այդ տեսակ դրամ չեմ բնորոշել... թող զրկված տեղում ստուգեն...

Ի թիւս որոյ և ժընէվից... Ես անմիջապէս հեռագրով ժը...

Եւ իրօք անմիջապէս այս բոլոր մանրամասնութիւնները պարզե...

Ու արեւմտեան Բիւրօն գրգռելով իմ իրաւացի նկատողու...

Մանկավարժները կը բաւեն... ամբողջ գումարը անմիջապէս ուղարկեցէք...

—Ոչ մանովրա, այլ իրականութիւնն է... բոլոր յարաբերու...

Բրովհետեւ իրօք այս բոլոր խայտառակութիւնը կ'ընէ գերադ...

ՎԱՐԴՕ

ՍՈՒԼՔԱՆԻ ՍԱՀԱՓՈՐ ԶԻՆ ԱՌԹԻԻ

Վիճեցա՛ւ... վիճեցաւ այն հօր, յանդուգն ու կորովի փորձը...

Ո՞վ կը յուսար մահափորձ մը Ապտիւլ Լամիտ... վրայ, ո՞վ կերպզէր այդպիսի արարքի մը...

Բայց դա կատարուած իրողութիւն մ'է այսօր... Ռուսները սպանութեան սպանալիք մը...

Այդ միեւնոյն օրը Լոնտօնի թիւրքական հիւպատոսարանը հետեւեալ նոթին արձակեց...

Այսօր, մինչ Սուլթան զուրս կելլէր մզկիթին Սէլամըքի արարողութեան վերջաւորութեան...

պալատը, Ֆայդօնը ինքնին քշելով, շնորհալիօրէն բարեւելով ժողովրդին...

«Մայրաքաղաքի ամբողջ բնակչու, թիւնը զայրացած է այս անպատիւ...

Զարմանալի է թէ Նորին Արիւնտրութեան Գազանութեան Լոնտօնի ծառան ինչո՞ւ զլացած է դնել լամբողջ մայրաքաղաքներու վեհապետները...

Բողբական արագութեամբ շնորհաւորական հեռագիրներ տեղացին ամեն անկիւնէ... Տրանսպի մարզասէր հանրապետութեան նախագահ՝ կրկնապէս մարզասէր Լուպէէն սկսեալ...

Բայց եւ այնպէս, մամուլը կը ցաւաւեւրի վեհանախարհութիւն ցոյց տալ... Այդ օր ինչպէս եւ յաջորդական օրեր, թէ՛ անպիտան, թէ՛ ֆրանսական եւ թէ՛ գերմանական մամուլին զաջօրիական լուսութիւնը արակարգ բան մըն էր...

Ասանցմէ մէկը նորացած բնուպետ Գայդէրի մամուլէն էր, պաշտօնական, սա աղիքով...

«Գերմանիա պիտի լսէ, մեծ հաճոյքով, որ նախախնամութիւնը հաճեցաւ պահպանել զոյսութիւն մը, որ այնքան ժանկարէն է Եւրոպայի խաղաղութեան համար...»

Այս շատ լաւ է, սոր ըսելիք չուներիք... Վիլհէլմէն ուրիշ բան չէր

սպասուէր, այլ ընդհակառակը, կ'ազնակարէր աւելին, հոգ չէ զոհե...

Ինչ ըսել, սակայն, երբ անզրիական մամուլին մէջ ալ տեսնուեցան ատոր մօտեցող, եթէ ոչ համաձայնօրէն՝ սինիք արտայայտութիւններ...

Փաղափար մը տալու համար՝ թէ ինչ կը մտածէ Անգլիոյ այդ դասակարգը այսպիսի արարքներու մասին...

Պիտտ շատ տեսակէտներով պատճառ կայ անկեղծ շնորհաւորութեան Սուլթանի մագապութեան փախուստին համար կատարուելու վերածուելէ Պուսոյ մէջ անցեալ ուրբաթ (Յուլ. 21/8)...

Սուրբապետութիւնը անխոր կերպով ատելի է, ո՞վ որ ալ ըլլայ անձը եւ ինչ շարժառիթով ալ (Օ՛ր, ինչպիսի նրբացած եւ զիւրազգած հոգի...)

Այս անգամ ինչպէս արտասահմանում, Միապետ մը, որ այնքան անպարտոյն խստութիւն ցոյցացած է որպէս Սուլթան ըրած է յաճախ, կատար չկայ որ այնքան մոլորանալ ատելութիւն զանէ, ինք անձնապէս չէ վարանած քաղաքականութեան նպատակով տանելի, եթէ ոչ զբոսել, հայերու կոտորածը, եւ եթէ չըլլար Երևանի խիստ արթուն պահպանումը, անհաւանական չէ որ այս առաջին փորձը չըլլար իր տեսակին մէջ, Մինչեւ օրս թիւրք Սուլթանները վախցած կին պալատի դաշեթէն, որ զինուորական ապստամբութեան ձեւ կտանէ...

Ա. ԱՍՏԻՏԵԱՏՐՈՒ ԳԻՆՏՈՐԻԱ ՊԱՎԼՕՎՆԱ (Տօնախմբութիւն) (Գրագիտի յիշողութիւններ) (Թարգմ. ուսերէնից) (Շար. նախորդ քիւիկ)

Նամակը այնպիսի եռանդով էր վերջացած, որ վերջին երեսի ցրված տառերի ու ստորագրութեան կատարի շարժումից մեկանի փոշիները տա...

բածվել էին ամբողջ երեսի վրայ... Ընդհանրապէս Բուրուենի նամակը ինձ վրա քառասուն տակտորութիւն թողեց... մէկ կողմից այնպէս էր երեւում որ իրօք մարդը չափազանց յուզումից խորտակվել է...

մասին ինձ քննութիւն է տալիս... Երբոր այդ օրինակները ազգու ու իրեն համար գովասանական... Աֆանասի յին մերժել է Մէֆիստֆէլի դերը տալ (Իրաւացի)...

—Այո, բաւական ծիծաղեցիքը... —Է՛հ, ուրեմն ինչպէս, խօսքերը կտորտելով ասեց Վանիկան... Վիկտորիան ժպտաց ու դառնալով ինձ ասեց...


Ճարտնական ներկայ պատերազմի եւ ուսական բրէտերի զգալի տկարացման անթիւ արգելանքներէն մէկն ալ անոց անհանգստութիւնն է թիւրքիոյ կողմէ, ազատուած ըլլալով ներկայիս իր հզօր զբաղելին երկարատեւ սպառնալիքէն Արեւելեան Եւրոպան, յարաշարժ ինչպէս սեղիկ, անկայուն կը դառնայ ո եւ է անխոհեմ պատահարի մը առթիւ, եր Սուլթանի սպանութիւնը նոր սարսափ մը պիտի տար գիւնապիտուութեան, որոնք արդէն պէտք եղածէն աւելի հրատապ հարցեր ունին ձեռքի տակ.....

Կը տեսնէ՞ք, թէ իրապէս չարամիտ մարդիկ չեն ասոնք. բայց, ինչո՞ւ պահեն, իրենց սեփական շահերը կայ մէջտեղ. այո՛, իրենց հանգիստը խոսով չեն ուզեր, Հոգ է բուն հարցը. Ըսէ՞ք անամթութիւն, ըսէ՞ք անմարգասիրութիւն, ըսէ՞ք ի՛նչ որ կուզէք. Այդ է տիրապետող զաղափարը եւրոպական մի՞ ու փոքր կառավարիչներուն վրայ:

Իսկ, եթէ օր մ'ալ իրինք զգան այդ հոյակապ հարուածը, որ բաժին ինկաւ Ռեմպիթի, Մաքքիլիի եւ այլ նմաններուն, թերեւս չը վարուին այնպէս, ինչպէս կընեն հիմա: Միւս կողմանէ, երբ եւրոպական մամուլին ու վեհապետներուն զէմ այլապէս կը խօսինք, հաւատամք արգեօք թէ Միւլիի պէյ, Լօնտօնի թիւրք հիւպատոսը եւ... նոյն իսկ կայսերական պալատը ընդունած են ՀՍԹ անուն կրող շնորհաւորական հեռագրեր եւ...
Գոցեցէ՛ք ականջնիւ!

Մ. ՅՈՒԱԿ

ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ



Այն ինչ որ է, ինչ որ կուզէ եւ ինչ որ պիտի ըլլայ.

Այս օրերս, Բարիզեան օրաթերթերէն մէկուն մէջ, գրուած էր ընդարձակ և մանրազնին տեսութիւն մը ուսական մտաւորաւ յեղափոխութեան նկատմամբ, որ նուիրած էր թերթին մասնաւոր թիւթերսպուրկի թղթակիցը՝ իբրեւ արդիւնք իւր երկարատեւ փորձառութեան: Այդ յօդուածը, պակասները ընդունելով հան-

խանցի, սպասելով որ կկսի ինձ հարցու փորձել մանրամասնութիւններ յարմար:

—Ես էլ ստացայ. զուք ինձ կը թոյլատրէք նրա ձեզ գրած նամակը կարդալ:

—Չը գիտեմ իրաւունք ունե՞մ թէ՞ ոչ...:

—Իրաւունք ունե՞ք. կարող եմ ձեզ ապացուցել նոյն հեղինակի գրութիւնից բերած մի պարբերութիւնով:

Վիկտորիան գրպանից հանեց փոստի թղթի մի հաստ տեղաւ, Բուրուի ինչոր եւ անկայուն գրութեանը, եւ բարձրաձայն կարդաց.

«Շատը ինչ որ ձեզ չեմ գրում, գրած եմ Ալէքսանդր Վալէնտինիին. կարդացէք թէ կուզէք. այնտեղ ձեզ կը բացատրվի թէ ինչ եմ սք եմ ես»...—Ու քանի որ, շարունակեց Վիկտորիան, ես ուզում եմ իմ տեղեկութիւնները լրացնել թէ ով

գերմ, կը պարունակէ իր մէջ շատ մը շահեկան տեղեկութիւններ, եւ շահեկանութեան հետ միասին՝ օգտակար կը դառնայ որպէս անկողմնակալ տեսութիւն մը լոկ այն պատճառով, որ հրատարակող թերթը չունի ցարիզմի հալածող այն կծու, կատաղի եւ անխնայ յատկանշները, որոնք շատ արդարացիօրէն կը մղեն այսօր ուրիշ շարք մը ընկերվարական, արմատական եւ այլ նման ուղղութիւններու պակասող թերթեր:

Անշուշտ, ինչպէս ըսինք, հետեւինք զայն կատարեալ ու անխալական հատուած մը նկատելէ, Կէտեր, մանաւանդ այնպիսիները, ուր յարգելի թղթակիցը յեղափոխութեան իրական ծնունդ տողներն ու յառաջանողները առաւելաբար կը նկատէ զէմտօններ, անուականներ, վաճառականներ, եւ այլն, անընդունելի եւ նոյն իսկ ներկայ իրականութեան անհամապատասխան արտայայտութիւններ են:

Մենք գիտենք թէ՛ բաներական ցոյց մը քաղաքական մտքով՝ կրնայ աւելի հզօր զարկ տալ յեղ. գործի անման, ինչպէս ըրած է եւ կընէ, քան տասնեակ մը գոց պատերու մէջ բաւերով կոտորու վիճող զէմտօններու եւ ազնուականներու յամաժողովները: Յեղափոխութիւնը կը պատկանի ժողովրդին եւ միայն ու միայն ան կրնայ յառաջանել եւ բաղձալի վախճանի մը բերել զայն: Իսկ ծանօթ իրողութիւն մէ՛ որ զէմտօն, ազնուական եւ այլն ինքզինքնին բարձր կը համարեն բուն ժողովրդէն եւ հետեւաբար, շատ բնականօրէն, չեն կրնար համանման պահանջներ ունենալ:

Ի՞նչ միջնե վերջերս, վերոյիշեալ բարեկարգիչները, սամիկին մտանալ իսկ կը խրաչին, սակայն, տեսնելով թէ իրենց ծրագրերնրու իրականացման համար հարկաւոր է նաեւ ժողովրդին բարձրելն, համակերպած պարագաներուն՝ այսօր, քիչ մ'ալ ժողովրդասէրի եւ սամկի վարականի հովիւր առած, նոր խաչափորութիւն մը սկսած են ցարիզմին հանդէպ, պահանջելով Ձէմաքի Սօպօր, ընդհանուր քուէարկութեան իրաւունք. քաղաքական ազատութիւն եւ այլն...:

Բայց ինչպիսի՞ վերապահումներով ինչպիսի՞ երկիւղով մի գոցէ կատաղի հալածանքի մը հանդիպին եւ

ինչպիսի՞ զոռչաւոր եւ աստիճան մ'ալ անտեղի հաճոյակատար ձեւակերպութիւններով. որոնք բոլորովին հեռու են՝ ուսական ներկայ իրականութեան մէջ՝ անմիջական բարեփոխութեան ազդու եւ նպատակայարմար պայման մը հանդիսանալէ:

Ասոնք յստակօրէն երեւան եկան վերջին գօնկրէր պահուն, երբ ամէն մէկը իր մտածումներն ու որոշումները իցոյց կը դնէր, ուր, նոյն իսկ յեղափոխականի փոքրով պակասած իշխաններ, պահանջ կը դնէին՝ քանի որ անկարելի յեղ. հոսանքին ստաշքը աւանդ գէթ շանալ զայն չափաւոր ու խոհեմ աստիճաններու վրայ դնել...:

Բայց եւ այնպէս, մեր նպատակը հոս քննադատական խօսիլ չէ. այդ հատուածը թարգմանօրէն կը ներկայացնենք Շարժումի ընթերցողներուն եւ իւրաքանչիւրը թող ինքնին տարրալուծէ եւ քննէ զայն:

Յօդուած մը գրելէ աւելի՛ կուզէի այսօր ուրուագծել յեղափոխութեան յատակադիրը այնպիսի ձեւով մը, որ ընթերցողը, ակնարկ մը նետելով հոն, կարողանար յստակ գաղափար մը կազմել իրերու յեղափոխական ընթացքին վրայ Ռուսաստանում, Պիտի վորձեմ:

1.— Յեղափոխութիւնը ո եւ առհնչութիւն չունի խառնակութեան հետ: Բան մը չը պահանջի անկէ. բան մը չը պիտի ընդունի անկէ: Գիտէ զայն ու բան մը չակնկալի իրմէ:

Բայց եւ այնպէս, երբ եւրոպան ակնարկ մը կը նետէ Ռուսաստանի վրայ, ան չը հաւատար Յեղափոխութեան միջնե որ խառնակութիւն չը տեսնէ հոն, Բուրուի կան փողոցներու մէջ բազրօլներու զէմ, բանեւրական ըմբոստացում կայ, հրացանաձուլութիւն կայ ընդդէմ ժողովրդին, կան զրկական ընդդէմներ, կան պաշտօնեաներու կոտորածներ, կայ Բօզէմբինի զէպը: Բայց, այս բոլորը յեղափոխութիւն չէ. ես խառնակութիւն է. Կեղութիւններէ ծրանունը առած: Եւ իբրեւ փաստ ասոր յեղափոխութիւն չը լինելուն, սա է որ՝ խոնջնքէ աւելի ուրիշ բանի մը չը յանգեցաւ այդ: Ռուսականութիւնը ինքնին թուլացաւ այն բոլոր քաղաքներուն մէջ՝ ուր որ տեղի ունեցաւ: Նոյն իսկ Լօց: Վարչապա, Լի-

պովա, Օտէսա: Ռուսականութիւնը այնպիսի զէնքեր ունեցաւ. ձեռքում, որ կարծեցին թէ կայսրութեան տէրն է. բանի մ'ալ տէրը չէր ան: Ռուսականութիւնը նաև մը ունեցաւ. եթէ նոյն իսկ Ռուսաստանը ուրիշներ ա չունենար,—ի՞նչ քրաւ: Բ'չ, ո'չ. խառնակութիւնը յեղափոխութիւն չէ. ասի ժողովրդային ցաւին արիւնալի ժէսթն է, մէսթ մը, որ կրկին կրչնէ:

2.— Յեղափոխութիւնը կարգապահութեան յատուած պիտի գայ: Կը հասնի կոր ան: Պէտք է կարգապահութիւնով լսել այն ամենը, որ ժողովրդի մը ոյժն ու հարստութիւնը կը կազմեն: այն ամենը, որ կրնայ իր բարգաւաճումը կազմել:

Կարգապահ մարդիկ են որ պիտի յառաջանեն յեղափոխութիւնը, այսինքն վաճառականները, մեծ ու փոքր. հողային կալուածատէրերը, մեծ ու փոքր, առեւտրականները, աշխատատէրերը, գեղղուկ բանւորները, քաղաքացիներն ու գիւղացիները, բարեկամներ՝ աշխատութեան, ներքին հանդարտութեան, արտաքին խաղաղութեան. ազնուականները, շատ մը աշուուականները, որոնք հասկցան թէ բարձրէն եղած խառնակութիւնն ալ վարինին չափ զէմ է իրենց շահերուն, այսինքն, ինքնակալ-պիւրօլրատական կասաւարութիւնը աւելի վախճար անկէ՛ քան յուզէր, քանի որ ինք ստեղծած է զայն. ապա, բոլոր ազատամիտները, եւ, բնականաբար, փաստաբանները:

3.— Ինչո՞ւ յեղափոխութիւնը պիտի յառաջանայ կարգապահ մարդոցմէ: Որովհետեւ ասոնք անոնք են՝ որ է՛ն աւելին կը տուտպին իրերու ներկայ վիճակէն. որովհետեւ ասոնք գիտցած են որ ներկայ գրութեան երկարումը իրենց վճռական կործանումը պիտի ըլլայ. որովհետեւ, ունենալով տակաւին կորսուելու ենթակայ բան մը, չը պիտի թուլանան կողմն մէջ, ինչպէս անոնք՝ որ արդէն ամեն ինչ կորսնցուցած են. եւ ամենէն աւելի, որովհետեւ, կասաւարութեան վրայ վստահելու սխալը գործած ըլլալով՝ չը պիտի ներեն կասաւարութեան խօսքերուն իրենք իրենց զէմ՝ ելած չըլլալու համար: Ատկէ կը հետեւի թէ՛ անոր զէմ պիտի ուղղուին իրենք: (Շարունակելի)

եւ ինչ է պարոն Բուրուի, ուստի շատ եմ խնդրում որ տաք ծանօթանամ նրա գրականութեան հետ:

—Վիկտորիա Պապուլեա, ես պէտք ձեզ նախազգուշացնեմ որ այնտեղ տեղեր կան, որ կարգաւ ձեզ համար շատ տնձեղի պիտի լինի: Ես նոյն իսկ չեմ հասկանում թէ ինչպէս ես վճռում է ձեզ առաջարկել այն նամակը կարդալու:

—Հաւանական է որ ինձ գրած մի ջոցին, թուանալից շեշտով շարունակեց Վիկտորիան, նա արդէն ձեզ գրածը մոտացնել էր, եւ ինքն էլ չը զիտէ թէ ինձ ինչ է ստաշարկում կարդալ... բայց արտօնված է կարողալ, ես ունեմ՝ այդ իրաւունքը եւ ուզում եմ օգտվել:

—Ես ձեռքը մեկնեց որ նամակը տամ. —Ես սեղանիս վրա եմ թողել... իրօք նամակի մէջ կուպիտ բաներ շատ կան, գոնէ թոյլ աւէք որ... —Ուզում էք Բուրուիին գրաքննու-

թեան ենթարկել որ երեխաները կարգաւ կարենան. ես կը փորձեմ հասուն մնալ, թող գործը միջնե վերջը յստակ երթայ: Մեղադրականը ամբողջ պէտք է կարդալ. իսկ ձեր ստացածը մեղադրական է է:

—Ես էլ Բուրուիից ստացած տետրակս բերի եւ յանձնեցի Վիկտորիային, նա էլ իր ստացածը ինձ տուց, ասելով.

—Իուք էլ այս արտադրութեան հետ ծանօթացէք:

Ու ես, լճակի փոխմ գտնված նստարանի վրա նստելով, ուր առաջին անգամ Բուրուիին հետ խօսել էի, այժմ կարդում էի նրա Վիկտորիային ուղղած մեաս բարովի նամակը: Սկզբում այդ հրաժեշտագիրը կարծես արամաբանական շարունակութիւն լինէր իմ ստաշածի, բայց վերջը փոխվում է բացականչութիւններով— Օհ, Վիկտորիա, եւ պաղատում որ իրեն չը թողնի, ներէ՛, հակառակ

պարագային ամբողջ Ռուսիան կանիծէ, իբրեւ չար ուժ պէտք է մատնանչէ շատ բան խոստացող տաղանդը ոչնչացնելու համար:

—Այս ինչ է, կրկնեցի ես, տեսնելով որ Վիկտորիան մտանում է ինձ, հպարտ եւ յաղթական եւ բարկութեան կարմրութիւնը երեսին:

Նա լուռ էր եւ թունոտ ժպիտով: Ես շարունակեցի.

—Երեւում է որ դուք իրաւացի էք. խեղճը ձեզ գրած միջոցին մոտացել է ինձ գրածը:

—Այո, նոյն սաստիկ արհամարանքի ժպիտը երեսին շարունակեց Վիկտորիան, այս երկու տօքումանները, նա ճիշտ է ասում, նրա լիակատար նկարագրին են ներկայացնում:

(Շարունակելի)

ՏԵՂԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՖԻԼԻՊԷՆ



Անցեալ օրուան նկարագրուած մեր ընկերներու ժողովէն կարեւոր միջոցէպ մը հաղորդել մտնուած էր ձեզի Հոշակաւոր տղանորձի մը, բառի բուն նշանակութեամբ մակարոյժ մը որ Լեւոն Սարգիսեանի անմիտ խնդիրը շահագործելով ընկերներէն շարունակ բարա կառնէր, Ռոստոմին սուղ սուղ բաներ կը շինէր. տեսակ մը լուծու կաշառք առնելով. մարդ մը որ իր շեղած միջոցին Զօրեաններու, Անտոններու օգնութեանը կը դիմէր հասարակութեան ծաղրի նիւթ դարձնելով ընտանեկան ամեն սրբութիւն. և որուն անունը չենք տար միայն Դաշնակցութիւնը յայտ հասարակութեան շանպատելու համար. որ իր ծոցին մէջ այդպիսի վարձուց տրուած մը ունի, ճառ մը արտասանելու է Վարդօն հայհոյելով, զեղծարար դաւաճան 12 հազար ֆրանքը ուտող հոշակելով, և իբր թէ հաշիւ չը տալու համար Վարդօն սկսած է սուտերու զրպարտութիւններու գիմել, ու այդ պատճառով պէտք է անպատճառ թերթ մը հանել անոր դէմ մաքառելու համար:

Այդ միջոցին ընկերներէն մին ուսքի ելլալով կըսէ. խօսքը ուղղելով Վարդօն հայհոյող խեղճ արարածին. դուք Վարդօնի համար զեղծարար, դաւաճան, և այլն կըսէք. կայ զեղծարար չ'ըզող մարմին մը, կամ գործիչ մը. մենք ունինք այն տեսակ զեղծարար մարմիններ և գործիչներ ունինք դաւաճաններ, անգործ անճարակներ, որ Վարդօնի մէկ մազը չեն արժէր. այն ո՞վ է որ Վարդօն կուզէ հարուածել ու զայն հալածել զէթ ունեցած է անոր գործունէութեան, անոր օգտակարութեան մէկ քառորդը. նոյն իսկ մեր շրջանին մէջ կան զեղծարարներ և դաւաճաններ. միթէ զեղծարարութիւն չէ՞ որ յեղափոխութեան անունով հաւաքուած դրամներով կուզէք թերթ հրատարակել, այն ալ ձեր վատ կրքերուն գոհացում և ձեզ միջոց ստեղծելու զտոր միտունով:

Ներկայ օրիորդներ, տիկիներ (Ռոստոմի վարժուհիներ) պարոններ զողողալով ոտքի կելլեն ու կըսեն խնդրեմք— բռնք պարոն. ի՞նչ զեղծումներ կան, ո՞ր մարմինը և գործիչը բրած է Վարդօնի բրածը. նոյն իսկ մեր շուրջն ալ կայ. բողոքող պ. կը յայտարարէ որ քիչ օրէն ամեն խայտառակութիւններ հասարակութեան առջեւ կը պարզուի. Եւ այդպէս փափկասիրտ և կոշտասիրտ սեռերէ կազմուած

ժողովը սրտաբեկ եղած կը ցրուի. Այդ ժողովին ներկայ էին և տեղոյս նորեկ ու հին ծառայողները. Լաքէները:

Գուր, պ. Վարդօն ապահով եղէք. ձեր պատիւը պաշտպանելու և արդարութիւնը իր տեղը դնելու միջոց պատրաստ ենք:

ՖԻԼԻՊԷՆ

Ե. Խմբ. Մենք խուսափում ենք այստեղ այդ ժողովին մասնակցողներին անունները դնելու. միայն իրողութիւնը այն է որ մեծամասնութիւնը իրենց տեղական չէֆերով միասին կազմված է այնպիսի մարդկանցից որոնց անունները եթէ հրատարակ զնէինք. Բաղկանեան բոլոր մկները այդ երկու ոտանի մկներին տեսնելով յեղափոխական տեղոսի տակ իրենք էլ յեղափոխական դառնալով յարձակում պէտք է գործէին Պոլսոյ վրայ:

ՆԱՍԱԿ ԵՐԿՐԵՆ

Հայաստանի վերջերը շատ խոր ու անբուժելի է, շատ գրեցինք, լացինք, ու աղաչեցինք. մեր ներկայ գերեզմանային դրութիւնը զէթ մի փոքր մասը մեր արտասահմանի հարազատներուն լսելի ընելու. բայց մեր բոլոր գերագոյն ճիգերն ապարդիւն անցան, ու մենք մինակ մնացինք ճակատագրական անողորմ պատահարներուն հանդէպ, աղատ երկնքի տակ ապրող մեր եղբայրներն, շունեցան մարդկայնական վեհ զգացում մը, լսելու այն պաշտելի կեանքերուն ձայնը, որոնք արեան գետերու մէջէն օգնութիւն, օգնութիւն կազաղակէին:

Թաթարական ցեղին վիժած սրիկան, վերջին անգամ մտատիրէ իւր սողայելական ձեռքը երկնցներու, ու գազանաբար կուլ տալու հայ կեանքին ցանցառ մնացորդները, անողորմ իրակաւութիւն մըն է. ինչպէս առաջ, ներկայիս ալ չի պիտի ուշանայ մեր ըսածները իրագործելու, ի՞նչ կը մտածէ արտասահմանի հայութիւնը, ի՞նչ կը մտածեն Յեղափոխական կուսակցութիւնները, այս անգամ ալ չը՞ պիտի փութան ազտին առջեւը առնելու իրենց կարելի միջոցներով, բաւ չէ՞ն իրենց բռնակալները, վէճերը, մէկզմէկ զրպարտելը, ու անպատուելը, չէ՞ որ իրենց այդ վարքով աւելի համարձակութիւն և իրաւունք կուտան ոճրագործ Համիտին իւր գազանութիւնները կատարելագործելու, վերջապէս դեռ բաւ չէ՞ն փորձերը ու իրողութիւնները որոնք հարիւրներով մեր առջեւն ունինք. այս ուղղութիւնը եթէ շարունակենք բոլորովին կորսուելու դատապարտուած ենք:

Երկրին մէջ այն հաւատքը ու

նէինք թէ արտասահման ունինք կազմակերպուած և պատրաստ հայութիւն մը, որոնց վրայ յոյս կարելի է դնել թէ հեռու չէ՞ այն անուշ օրը, երբ ազատութեան արշալոյսը պիտ ծածանի մեր սքոպտ լեւներուն վրայ, ու ձեռք ձեռքի տուած յաղթական ու վրիժառու թափով մը պիտ խորտակենք մեր անարգ Կահիճը, ու տիրանանք մեր Հարենի երկրին:

(Երաւունակելի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆիլիպէի կեղծ դրամներ կը բողոքներուն գործին քննութիւնը կը շարունակուի. բաւական մարդիկ ձերբակալուած են. Գլխաւորը պուլկար մը եղեր է, որուն քով գտնուել են և գործիքները:

— Բանիա Կատէնէցի լուցկիի գործարանը որ պեղծիքակտն ընկերութեան մը կը պատկանի և վերջերս չէր գործեր, հրդեհուած է. Պեղծայի կայարան ալ մեծ հրդեհ ընկեր է. քանի մը շինութիւններ այրուած են:

— Ներքին գործոց նախարարը Սոֆիա վերադարձաւ Խարիզէն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Այժմ ալ երկու տեսակ լուրեր կը պտտին Սուլթանը սպանելու, եղած փորձին առթիւ. առաջին կըսեն որ փորձը ընողը ռուսահայ օրիորդ մըն է Պետրովա. մականունով որ երեք տարիէ իվեր կը պատրաստուի եղեր այդ գործը յաջողցնելու համար: Այդ օրիորդը իր վրա կասկած հրաւիրէ փորձէն վերջը Պոլսէն Ռուսմանիա մեկնելուն: Երկրորդը՝ փորձ ընողը Հոլանտացի անիշխանական մը կը կարծուի. որ կապրի եղեր Թէրէ-Պաշի, կահաւորուած սենեակի մը մէջ և շատ շուտ լուրէն:

Հոլանտացիի անունը Սպէր եղած է, որ առաջ իբր ռուսահայ տակ կը կարծուէր. այդ մարդը վերջին միջոցներս մէկ քանի անգամ Պոլիս մտեր ելեր է և միշտ զանազան անցազրերով, ու մահափորձէն վերջը անմիջապէս անհետացեր է:

Մակեդոնիա

Պոլսէն կը հաղորդեն որ մարտ 1էն—յուլիս 1 Մակեդոնական երեք վիլայէթներու եկամուտէն Պանք Օթոման տրուած է 590,181 թրք. ոսկի, և նոյն նահանգներու պետքերուն համար ծախսուած է 478,959 այնպէս որ 11222 ոսկի աւելցեր է. Այդ ներկայ բարենորոգումներու արդիւնքն է:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Յուլիս 24 ին Իսթեբուպուրկէն կը հեռագրեն թէ՛ Սարի Նախագահութեամբ բարենորոգումներուն ծրագիրը քննող խոյհրդին երրորդ նիստը տեղի ունեցաւ. դեռ երեք նիստեր ալ տեղի պիտ ունենան, բայց աղգային ժողով հրաւիրելու հրովարտակը հաւանական է որ ամսոյս 30ին հաշակուի:

— Կոմս Եուվալօֆը սպաննողը զինուորական ատեանի կողմէն մահուան դատապարտուեցաւ. սպանողը, Կուլիկովսկի, յայտարարած է թէ գործը կատարած է յեղափոխական կոմիտէի հրամանով, կոմսին Օտէսայի մէջ գործ գրտծ խստութիւններուն համար:

Կ Ի Է Տ Է

Իտալական կառավարութիւնն շուտով նոր զօրք պիտի զրկէ շահագրգռող պետութեանց հիւպատուներու ապստամբներուն տուած ուլթիմաթումը գործադրելու համար:

— Լոնտոնէն կը հաղորդեն որ յունական կառավարութիւնը պետութեանց նօթա մը զրկեր է, որով կը յայտարարէ թէ առանց յունական զօրքերու անկարելի է որ խաղաղութիւնը վերահաստատուի կղզիին մէջ:

ՌՈՒՍ—ՃԱՔՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

— Կը հաղորդեն որ Լինէվիշ պարտաւորուած պիտի ըլլայ Եանահանջելու սխառմը ընդունիլ յարձակողականի փոխարէն:

— Նիւ Եօրքէն Բարիզ կը հաղորդեն որ ճարտական լիազօր պարոն Քոմուրա իմանալով որ Ուիթէ չը պիտի կրնայ խնդիր մը վճռել անկախօրէն և առանց ցարին տեղեկագրելու մերժեր է հայտութեան բանակցութիւններու մէջ մտնալ:

Ա Ջ Դ

Տեղոյս երկսեռ դպրոցի մէջ պաշտօնավարելու համար. կարող վարժուհիի մը պէտքը կայ. գոհացուցիչ ամսականով. մանրամասնութեան համար դիմել տեղոյս Հոգաբարձութեան ատենապետին:

• Ի դիմաց Հոգաբարձութեան
Վ. Ատենապետի Ատենապետ
Վարդան Աղէքսանդր Գ.
Արապեան Քիզիբեան
(Կնիք)
23 Յուլիս 1909
Սիւլէն

